Ս II/65
10. 02. 03

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆԱՀԻՏ ՍԼԱՎԻԿԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

<<ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ>> ԵՎ <<ԹՇՆԱՄՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՍԿԱՑՈՒՅԹՆԵՐԻ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ժ.02.03 - <<Համեմատական և տիպաբանական լեզվաբանություն>>
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2012

© National Library of Armenia OCR by Portmind

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	բ.գ.թ., դոցենտ Գ. Վ. Եղիազարյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	բ. գ. դ., պրոֆեսոր Դ. Հ. Համբարձումյան
	բ.գ.թ., դոցենտ Հ. Ջ. Ղազարյան
Առաջատար կազմակերպություն՝	Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2012 թ. դեկտեմբերի 26-ին, ժամը 13.00-ին, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում գործող ԲՈՀ-ի 059 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0002 Երևան, Թումանյան 42:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012թ. նոյեմբերի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ բ.գ.թ., դոցենտ Լ. Ե. Մարկոսյան

11-65

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Վերջին տասնամյակներում գիտական մտածողության մեջ ի հայտ եկած նշանակալի փոփոխությունները հանգեցրին մի շարք էական հասկացությունների վերանայման անհրաժեշտությանը, և ժամանակակից լեզվաբանական ուսումնասիրություններում կարևորվեցին ոչ միայն պատմակառուցվածքային, այլև մշակութային, ճանաչողական և մարդաբանական հարացույցները: <<Լեզու-մշակույթ-ճանաչողություն>> աղերսները ուսումնասիրելու առաքելությունը ստանձնեցին ճանաչողական լեզվաբանությունը և լեզվամշակութաբանությունը: Միմյանց հետ փոխկապակցված և փոխպայմանավորված լեզվաբանական այս երկու գիտակարգերի հիմնական նպատակներից է լեզվակիր հանրույթի գիտակցության մեջ՝ մարդկության զարգացման որոշակի փուլում աշխարհի մասին գիտելիքների կարգայնացման համակարգի ուսումնասիրությունը:

Ճանաչողական լեզվաբանության և լեզվամշակութաբանության հիմնական միավորներից է ***հասկացույթը,*** որի բառայնացման օրինաչափությունների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում վերլուծել լեզվակրի աշխարհընկալման առանձնահատկությունները, գիտելիքի ներկայացման և իրականության վերաիմաստավորման միջոցներն ու եղանակները: Իրականության վերաիմաստավորումը հաճախ հյուսվում է վերացական հասկացությունների հակադրության և դրանց պատկերային ու արժեքային ընկալումների հիման վրա: Ինչպես Ա. Պ. Բաբուշկինն է փաստում, <<վերացական հասկացույթները իրենց բնույթով գնահատողական են (դրական-բացասական երկփեղկության սկզբունքով) և գործածվում են որոշակի զգացմունքային տրամադրությունների համատեքստում>>[1]: Լեզվակիրները ճանաչում են այս հասկացույթները ոչ թե բառարանային սահմանումներից, այլ՝ սեփական և հանրային փորձի, ինչպես նաև՝ տվյալ լեզվամշակույթի և էթնոսի ավանդույթների վերաիմաստավորման արդյունքում:

Մարդկության պատմության զարգացման ողջ ընթացքում *բարեկամություն* և *թշնամություն* հասկացությունները գրավել են ոչ միայն գրողների, գրականագետների, փիլիսոփաների, հոգեբանների և մարդաբանների, այլև՝ լեզվաբանների ուշադրությունը: Այս խնդրի հանդեպ գիտական հետաքրքրությունը պայմանավորված է այն փաստով, որ թեպետ դիտարկվող

---

[1] Бабушкин, А.П. Типы концептов в лексико-фразеологической семантике языка / А.П. Бабушкин. Воронеж: Изд-во Воронеж. гос. ун-та, 1996. С.39.

© National Library of Armenia

հասկացույթները համարվում են համընդհանուր հասկացույթներ, սակայն տարբեր մշակույթներում ներկայանում են մշակութորեն նշութավորված դրսևորումներով և լեզվական առանձնահատկություններով: Վերջին տարիներին բազմաթիվ տեսաբաններ (Вежбицкая 1992, Садчикова 1993, Лукашкова 2001, Арапова 2004, Шмелев 2004, Хизова 2005, Арапова, Гайсина 2005, Лунцова 2008, Ларина 2009 և այլք) անդրադարձել են *բարեկամություն* և *թշնամություն* հասկացույթների տարբեր տեսանկյուններով և ուսումնասիրել դրանք տարբեր լեզուներում: Սակայն մինչ օրս հայ լեզվաբանության մեջ չեն դիտարկվել *բարեկամություն* և *թշնամություն* հասկացույթները՝ դրանց հասկացական, պատկերային և արժեքային բաղադրիչների համալիր ուսումնասիրմամբ, ինչպես նաև՝ չեն իրականացվել այդ հասկացույթների զուգադրական վերլուծություններ երեք՝ հայ, բրիտանական և ամերիկյան լեզվամշակույթներում: Հենց այս փաստով է պայմանավորված թեմայի մեր ընտրությունը. *բարեկամություն* և *թշնամություն* հասկացույթները մշակութային և լեզվական դրսևորումներով լեզվակիրների և մշակութակիրների արժեհամակարգի, աշխարհայացքի, խոսքային վարքագծի կարևորագույն կողմնորոշիչներից են և տարբեր կերպ են ընկալվում տարբեր լեզվամշակույթներում, որն էլ վճռորոշ գործոն է համեմատական այս ուսումնասիրության համար:

Սույն ատենախոսության ***առարկան բարեկամություն*** և ***թշնամություն*** հասկացույթներն են, դրանց ուսումնասիրությունը հայ, բրիտանական և ամերիկյան լեզվամշակույթներում:

Որպես ուսումնասիրության ***լեզվանյութ*** ծառայել են անգլերեն և հայերեն բառարաններից դուրս գրված ***բարեկամություն*** և ***թշնամություն*** հասկացույթն առկայացնող բառային և դարձվածային միավորները, ասացվածքներն ու առածները: Հասկացույթի կիրառությունները լուսաբանվել են անգլերեն և հայերեն գեղարվեստական գրականությունից դուրս բերված օրինակներով:

Ուսումնասիրության արդիականությունը. Աշխատանքի **արդիականությունը** պայմանավորված է նախևառաջ այն հանգամանքով, որ հանգուցային հասկացույթների վերլուծությունը, դրանց տեղն ու դերը տվյալ ժողովրդի լեզվամշակույթում վեր հանելը, ինչպես նաև՝ տարբեր մշակույթներում դիտարկելն ու զուգադրելը մեծապես կարևորվում է ժամանակակից լեզվաբանական ուսումնասիրություններում: Լեզվաճանաչողության և լեզվամշակութաբանության համատեքստում *բարեկամություն* և *թշնամություն* հասկացույթների վերլուծությունը և դրանց զուգադրումը հնդեվրոպական լեզվաընտանիքի երկու հեռավոր ճյուղերին պատկանող լեզուներում, **արդիական** է ոչ միայն լեզվական ընդհանրությունների և տարբերությունների վերհանման առումով: Նման ուսումնասիրությունը կարող է նպաստել երկու ժողովուրդների փոխշփումների պահանջի հենքի վրա կարևորվող միջլեզվական և միջմշակութային առնչությունների զարգացմանը, ինչպես նաև՝ մշակութային

արժեքների փոխանցման նպատակով անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն ճշգրիտ թարգմանությունների իրականացմանը:

Ուսումնասիրության գիտական նորույթը. Ատենախոսությունում առաջին անգամ հստակորեն առանձնացվում, բնութագրվում և վերլուծվում են ***բարեկամություն*** և ***թշնամություն*** հասկացույթները, դրանց լեզվական առկայացման և անվանակարգման միջոցները՝ բառային և դարձվածային մակարդակներում (հասկացույթի վերլուծությունն իրականացվում է երկու գիտակարգերի՝ լեզվաճանաչողության և լեզվամշակութաբանության գործիքակազմերի համատեղմամբ), ներկայացվում են երկու հասկացույթների բառիմաստային և հոմանիշային շարքերը, ինչպես նաև՝ խոսքաշարային դրսևորումները հայերենում և անգլերենում: **Նոր** է և հետաքրքրական ***բարեկամություն*** և ***թշնամություն*** հասկացույթների զուգադրությունը երեք՝ հայ, բրիտանական և ամերիկյան լեզվամշակույթներում: **Բարեկամություն** և **թշնամություն** հասկացույթները տարբեր լեզուներում կարող են ունենալ ոչ միայն ընդհանրություններ, այլև արտահայտել միանգամայն տարբեր արժեքային նրբերանգներ, ինչն էլ այդ հասկացույթների զուգադրական վերլուծությունն իրականացնելու կուռ հիմնավորումն է: Հետազոտության մեջ **նորույթ** է նաև ընտված հասկացույթների զուգորդային դաշտերի ներկայացումը երկու լեզուներում և դրանց նմանությունների ու տարբերությունների վերհանումը: **Նոր** է կորպուսային վերլուծության ընձեռած տվյալների հիման վրա ***բարեկամություն*** և ***թշնամություն*** հասկացույթների վերլուծության և զուգադրության փորձը անգլերենում և հայերենում. այս կերպ բացահայտվում են համընդհանուր այս հասկացույթների ընկալման և գործածության հաճախականության տարբերությունները, որն էլ վկայությունն է տվյալ լեզվակրի մշակութային և լեզվական ինքնության:

Ատենախոսության նպատակը: Աշխատանքի նպատակն է համեմատական-զուգադրական վերլուծության ենթարկել ***բարեկամություն*** և ***թշնամություն*** հասկացույթների իմաստային, կառուցվածքային և արժեքային առանձնահատկությունները, վերհանել դրանց բովանդակային համալրման ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկությունները՝ հայ և անգլախոս[2] հանրույթների գիտակցության մեջ, ինչպես նաև՝ վերլուծել և զուգադրել դիտարկվող հասկացույթների բառայնացման մեխանիզմները և լեզվական

---

[2] *Բարեկամություն* և *թշնամություն* հասկացույթների լեզվականացման միջոցները վերլուծելիս մենք չենք տարանջատել բրիտանական և ամերիկյան մշակույթները, եթե բառային կամ դարձվածային մակարդակներում խիստ ցցուն տարբերություններ չեն նկատվել:

կաղապարման միջոցները՝ անգլերենում և հայերենում: Իրականացնելով սույն ուսումնասիրությունը՝ մենք կարող ենք նպաստել այն կարծիքի հաստատմանը, որ ***բարեկամություն*** և ***թշնամություն*** հասկացույթները միջանձնային, միջխմբային, ազգերի և պետությունների միջև փոխհարաբերություններ ներկայացնող բարդ մտային կառույցներ են, հավաքական գիտակցության դիսկրետ միավորներ, որոնք արտացոլում են հասկացական և արժեքային մի շարք առանձնահատկություններ և կարող են հիմք ծառայել հայ, բրիտանական և ամերիկյան ազգային լեզվամտածողության բնորոշ գծերի բացահայտման, դրանցում առկա նմանությունների և տարբերությունների վերհանման և հիմնավորման համար:

Այս նպատակին հասնելու համար ատենախոսության մեջ առաջադրվել են հետևյալ *խնդիրները*՝

- համակողմանի ուսումնասիրության ենթարկել ճանաչողական լեզվաբանության և լեզվամշակութաբանության հիմնական միավոր ***հասկացույթ*** եզրույթը և ***հասկացույթի*** վերլուծության հիմնական մեթոդները,
- ուսումնասիրել ***բարեկամություն*** և ***թշնամություն*** ճանաչողական - մշակութային հասկացույթները՝ վեր հանելով դրանց հասկացական և արժեքային բաղադրիչները՝ հայ, բրիտանական և ամերիկյան մշակույթներում,
- վերլուծել ***բարեկամություն*** և ***թշնամություն*** հասկացույթների իմաստային տիպերն ու դրանց կարգայնացման առանձնահատկությունները՝ բառային մակարդակում և զուգադրել դրանք անգլերենում և հայերենում,
- վերլուծել ***բարեկամություն*** և ***թշնամություն*** բաղադրիչով, ինչպես նաև՝ այդ հասկացույթն առկայացնող այլ բաղադրիչներով դարձվածային միավորները (ԴՄ), ասացվածքներն ու առածները, վեր հանել այդ հասկացույթների զուգորդային դաշտերը և զուգադրել դրանք անգլերենում և հայերենում,
- ուսումնասիրել ***բարեկամություն*** և ***թշնամություն*** հասկացույթների գործածության ոլորտները և կիրառման հաճախականությունը՝ ըստ կորպուսային լեզվաբանության ընձեռած տվյալների:

Մեր ուսումնասիրության ***տեսական-մեթոդաբանական*** հիմքը՝ լեզվի դիտարկումն է մարդաբանական հարացույցում, որը կարևորում է լեզվակրի մշակութային արժեքները և նրա ճանաչողական և մտածական գործընթացները: Աշխատանքում օգտագործվել են ճանաչողաբանության (Է. Բենվենիստ, Չ. Ֆիլմոր, Ջ. Լակոֆֆ և Մ. Ջոնսոն, Է. Ռոշ, Ե. Կուբրյակովա, Վ. Կասևիչ, Վ. Մասլովա, Յու. Ստեպանով և այլք), լեզվամշակութաբանության (Ե.Վերեշչագին, Վ. Տելիա, Ա. Վեժբիցկայա, Ն. Արությունովա, Յու. Ստեպանով, Վ. Մասլովա և այլք) և հասկացութաբանության (Ե. Կարասիկ, Ա. Բաբուշկին, Ի. Ստերնին, Ս. Վորկաչով, Վ. Կարասիկ, Ն. Արությունովա, Վ. Կրասնիխ և այլք) ոլորտի մի շարք տեսաբանների առաջ քաշած կարևորագույն դրույթներն ու հայեցակերպերը:

Լեզվաբանական վերլուծության ***մեթոդների*** մեր ընտրությունը բխում է ուսումնասիրվող նյութի բնույթից և նպատակից. ***բարեկամություն*** և ***թշնամություն*** հասկացույթների վերլուծության ընթացքում կիրառվել են բառարանային համատարած ընտրանքի (բառերը և դարձվածքները լուսաբանվել են գեղարվեստական գրականությունից դուրս բերված օրինակներով), բաղադրիչային վերլուծության, հասկացութային վերլուծության, զուգադրական վերլուծության և համաժամանակյա զուգահեռ մեկնաբանման մեթոդները (երբեմն անհրաժեշտություն է զգացվել դիմել տարժամանակյա քննության, քանի որ հարկ է եղել պարզել քննվող բառերի ստուգաբանությունը և ծագման աղբյուրը): Կատարվել է նաև լեզվաբանական կորպուսների ուսումնասիրություն և վիճակագրական վերլուծություն:

Ուսումնասիրության տեսական արժեքը: Տվյալ հետազոտության արդյունքները կարող են նպաստել ինչպես մեկ լեզվի հասկացութային համակարգի հետագա ուսումնասիրությունների իրականացմանը, այլև՝ լեզվամշակութաբանության և լեզվաճանաչողականության շրջանակներում զուգադրական հասկացութաբանության մեթոդիկայի մշակմանը և զարգացմանը:

Ուսումնասիրության գործնական արժեքը: Նման հետազոտության արդյունքները կարող են ունենալ մի շարք գործնական կիրառություններ՝ օգտագործվելով լեզվամշակութաբանության և ճանաչողական լեզվաբանության, անգլերենի և հայերենի զուգադրական իմաստաբանության, հասկացութաբանության, միջմշակութային հաղորդակցման դասընթացներում, ինչպես նաև՝ գործնական ձեռնարկների և բառարանների ստեղծման ժամանակ:

Աշխատանքի փորձարկումը: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է ներկայացվել ԵՊԼՀ անգլերենի հաղորդակցման ամբիոնի և լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի համատեղ ամբիոնական նիստում: Հետազոտության առանձին դրույթները և արդյունքները քննարկվել են ԵՊԼՀ անգլերենի հաղորդակցման ամբիոնի նիստերին, բուհական և միջազգային գիտաժողովներում և տպվել հոդվածների ժողովածուներում:

Աշխատանքի ***կառուցվածքը*** բխում է ատենախոսության մեջ արծարծվող խնդիրներից. այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի ընտրությունը, արդիականությունը, գիտական նորույթը, տեսական և գործնական արժեքը, ուսումնասիրության նպատակներն ու մեթոդները:

Առաջին գլուխը, որը վերնագրված է *<<Բարեկամություն>> և <<թշնամություն>>* ***հասկացույթները հայերի, բրիտանացիների և ամերիկացիների աշխարհի պատկերում*>>**, բաղկացած է երեք ենթագլուխներից:

© National Library of Armenia

Առաջին ենթագլխում (Հասկացույթը որպես ճանաչողաբանության և մշակութաբանության հիմնական միավոր) ներկայացվում են հասկացույթի սահմանման՝ տարբեր տեսաբանների կողմից մշակված հայեցակարգերը և վերլուծության մեթոդները: ***Հասկացույթը*** դիտարկվում է որպես լեզվաբանական երկու գիտակարգերի՝ լեզվամշակութաբանության և ճանաչողական լեզվաբանության հիմնական միավոր, որի միջոցով ուսումնասիրվում են <<լեզու–մշակույթ-ճանաչողություն>> աղերսները և աշխարհի լեզվական պատկերի կաղապարումը՝ լեզվակրի գիտակցության մեջ: Աշխատանքի այս ենթագլխում հիմնավորվում է գիտական այն թեզը, որ հասկացույթների բառայնացման օրինաչափությունների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում վերլուծել լեզվակրի աշխարհընկալման առանձնահատկությունները և վերծանել բնական լեզուների միջոցով իրականության կարծրատիպային կարգայնացնացման ալգորիթմները:

Հետևելով հասկացութաբանության ոլորտի ակնառու տեսաբանների հայեցակարգերին, մենք ***հասկացույթը*** դիտարկում ենք որպես՝ մարդու գիտակցության մեջ մշակույթի տարրերն արտացոլող ճանաչողական պլանի մտային միավոր, որտեղ ամրագրված է հանրային գիտելիքների ամբողջությունը: Հասկացույթը կարող է անվանակարգվել և իրացվել լեզվում, և հասկացույթի նշանակությունը պայմանավորված է լեզվական անհատի՝ աշխարհի պատկերում եղած արժեքների աստիճանավորումից:

Հասկացութային վերլուծությունները իրականացվում են տարբեր՝ բառային, շարահյուսական, դարձվածային և տեքստային մակարդակներում: Մեր աշխատանքում հասկացույթն ուսումնասիրվում է բառային և դարձվածային մակարդակներում, իսկ իմաստային նրբերանգները բացահայտվում են խոսքաշարային օրինակներով:

Ատենախոսության մեջ հասկացույթի վերլուծության ***տեսական և գործնական*** հենքը կազմում են ճանաչողական լեզվաբանության և լեզվամշակութաբանության հիմնական հայեցակարգերը, որոնք զանազանում են ճանաչողական և մշակութային հասկացույթները և ուսումնասիրում դրանք՝ վերլուծության տարբեր վեկտորներով:

Գ.Գ. Սլիշկինը տարբերակում է ***ճանաչողական հասկացույթը՝ լեզվամշակութային հասկացույթից***. եթե ճանաչողաբանի համար մեկ հասկացույթին համապատասխանում է մեկ լեզվական միավոր, ապա լեզվամշակութաբանի համար՝ հասկացույթը կարող է և պետք է առկայանա լեզվական միավորների ամբողջական շարքով[3]:

---

[3] Слышкин, Г. Г.. Лингвокультурные концепты и метаконцепты: дис....д-ра филол. наук/ Г. Г..Слышкин.-Волгоград, 2004. С. 22.

Եթե ճանաչողական լեզվաբանության մեջ հիմնական ուշադրությունն ուղղված է հասկացույթների տեսակների վերլուծությանը, դրանց համակարգային կազմությանը և փոխկապակցվածությանը[4], ապա լեզվամշակութաբաններին հետաքրքրում է տվյալ հանրույթի արժեքային կողմնորոշիչների, մտածական գործընթացների և կոնկրետ մշակութային հասկացույթների տարբերակիչ հատկանիշների համակարգված ուսումնասիրությունը>>[5]:

Տարբեր են նաև ճանաչողական և լեզվամշակութային հասկացույթների կառուցվածքները. ճանաչողական ուսումնասիրություններում շրջանառվում է հասկացույթի *շերտավոր* մոդելը, ըստ որի՝ հասկացույթը կազմված է *միջուկից* և *եզրային շերտերից*. Հասկացույթի միջուկը կազմում են հասկացույթի նախատիպային, առաջնային և առավել վառ հատկանիշները, իսկ եզրային գոտում ներառված են հասկացույթի վերացական հատկանիշները, զանազան ճանաչողական եզրահանգումները և մեկնաբանական շերտը:

Որպես ***ճանաչողական հասկացույթի*** վերլուծության հենք դիտարկել ենք Ի. Ա. Ստերնինի հայեցակերպը, ըստ որի՝ <<հասկացույթի նշանակությունը շատ ավելի լայն է, քան նույնանուն բառային միավորի նշանակությունը. բառի տարբեր կիրառություններում առկայացող իմաստների վերլուծության միջոցով հնարավոր է վերհանել հասկացութային հատկանիշները, որոնք էլ կազմում են այդ հասկացույթի նշանակությունը>>[6]:

Որպես ***լեզվամշակութային հասկացույթի*** վերլուծության հիմնադրույթ մենք ընդունում ենք Վ. Ի. Կարասիկի տեսակետը, ըստ որի՝ հասկացույթը <<իմաստային բազմաչափ միավոր>> է, որում առանձնանում են հասկացական, առարկայական-պատկերային և արժեքային բաղադրիչները: Հասկացական բաղադրիչը հասկացույթի լեզվական ամրագրումն է և իմաստային հիմնական ու հավելյալ բաղադրիչների ամբողջությունը, որը նույնականացնում է այն սահմանակից այլ հասկացույթների հետ: Հասկացույթի առարկայական-պատկերային բաղադրիչը բառային չէ. այն լեզվական անհատի գիտակցության մեջ կոնկրետ առարկաների, երևույթների կամ իրավիճակների ներկայացվածությունն է: Ըստ Վ. Ի. Կարասիկի՝ հասկացույթի ամենակարևոր և հիմնական բաղադրիչը *արժեքային* բաղադրիչն է, որն արտահայտում է տվյալ

---

[4] Бабева, Е. В. Лингвокультурологические характеристики русской и немецкой аксиологических картин мира: дис.: д-ра филол. наук .Волгоград, 2004. С. 110-111.

[5] Воркачев,С. Г. Лингвокультурология, языковая личность: становление антропоцентрической парадигмы в языкознании/С. Г. Воркачев// филологические науки.-2001.-N 1. С. 43-44.

[6] Стернин, И.А. Концепт и языковая семантика / И.А. Стернин // Связи языковых единиц в системе и реализации: межвуз. сб. науч. тр. / Тамб. гос. ун-т; редкол.: Н.Н. Болдырев (отв. ред.) и др.. Тамбов, 1999. - Вып. 2. - С. 69-75.

© National Library of Armenia

հասկացույթի կարևորությունը ոչ միայն լեզվակիր հանրույթի, այլև՝ լեզվակիր անհատի համար[7]:

Հասկացույթի կառուցվածքի մեկնաբանման նմանատիպ մոտեցում է ներկայացնում Ս. Գ. Վորկաչյովը, ով առանձնացնում է հասկացական, պատկերային և նշանակային բաղադրիչները:[8]:

Այսպիսով, հասկացույթի կառուցվածքի ուսումնասիրությունը ենթադրում է նրա ամբողջական բովանդակությունը կազմող և առանձին բովանդակային շերտեր ներկայացնող բաղադրիչների ծավալի որոշարկում: ***Ճանաչողական հասկացույթի*** դեպքում՝ դա հասկացույթի միջուկն է (կոնկրետ զգայական պատկերացումներ արտացոլող բազային ճանաչողական շերտերը) և ծայրամասը (վերացարկման տարբեր աստիճաններ ունեցող հավելյալ ճանաչողական շերտերը): ***Լեզվամշակութային հասկացույթի*** դեպքում՝ դրանք հասկացույթում ամրագրված մարդկային գիտակցության պատկերային-առարկայական-զգայական կառույցներն են, որոնք ձևավորում են լեզվակրի աշխարհի պատկերը և արժեհամակարգը և կանոնակարգում վարքագիծը:

Մեր ուսումնասիրության առարկայի վերաբերյալ առավել ամփոփ և համալիր տվյալներ ստանալու համար աշխատանքում կիրառել ենք հասկացույթների վերլուծության համալիր մոտեցում. ***բարեկամություն և թշնամություն*** հասկացույթները բառային մակարդակում դիտարկելիս և նրանց իմաստային դաշտերը որոշարկելիս հետևել ենք ճանաչողաբանների տեսակետին՝ ընդունելով հասկացույթը որպես <<բջիջ>>՝ իր միջուկային և եզրային հասկացական ընկալումներով, իսկ դարձվածային մակարդակում դիտարկելիս և նրանց զուգորդային դաշտերը որոշարկելիս՝ հետևել ենք լեզվամշակութաբանների տեսակետին՝ ընդունելով մշակութային հասկացույթը որպես բազմաշերտ իմաստային գոյացություն, որտեղ առանձնանում են հասկացական, պատկերային և արժեքային բաղադրիչները:

Այսպիսով, մեր ուսումնասիրությունում հասկացույթը դիտարկել ենք որպես <<մշակույթի և ճանաչողության հիմնական միավոր>> (Ն. Արությունովա, Ս. Վորկաչյով, Յու. Ստեպանով և այլք), որպես՝ հասկացական, պատկերային և արժեքային բաղադրիչների ամբողջություն (Ս. Վորկաչյով, Վ. Կարասիկ, Յու. Ստեպանով և այլք), որպես բազմաշերտ բառային գոյացություն (Վ. Մասլովա, Զ. Պոպովա, Ի. Ստերնին, Ր. Ֆրումկինա և այլք): Սրանք նախադրյալներ են

---

[7] Карасик, В. И. Языковой круг: личность, концепты, дискурс. Волгоград, 2002. С. 77.
[8] Воркачев, С.Г. Концепт счастья в русском языковом сознании: опыт лингвокультурологического анализа. Краснодар, 2002. С. 47.

հասկացույթների լեզվական իմաստների ընդհանրական հիմքերի բացահայտման և միջլեզվական համեմատությունների իրականացման համար:

Երկրորդ ենթագլխում, որը վերնագրված *է <<Բարեկամություն>> հասկացույթի ընկալումները հայ, բրիտանական և ամերիկյան մշակույթներում>>,* փորձ է արվում համակողմանի վերլուծության ենթարկել համամարդկային ամենակարևոր արժեքներից մեկի՝ ***բարեկամության*** հայ, բրիտանական և ամերիկյան ընկալումների առանձնահատկությունները: Լինելով սոցիալական, բարոյական, հոգեբանական նորմերի բարդ միահյուսվածք՝ ***բարեկամություն*** հասկացությունը տարբեր դրսևորումներ է ստանում մարդկային փոխհարաբերություններում:

Հայ ազգային ինքնության կարևոր բաղադրիչներից է ***բարեկամություն*** հասկացույթը, քանզի հայ ժողովրդին միշտ ուղեկցել է անկախության և ազատության պահպանման պայքարը և բարեկամներ ունենալու բաղձանքը: Շրջապատված լինելով ոչ բարեկամ երկրներով՝ հայերը դարեր շարունակ պայքարել են **թշնամիների** դեմ և ակնկալել բարեկամ պետությունների օգնությունը: Իր ողջ պատմության ընթացքում հայ ժողովուրդը հազվադեպ է ունեցել ***բարեկամ պետություններ*** (պատմական տարբեր ժամանակահատվածներում՝ Խորհրդային Ռուսաստանը, Ֆրանսիան և այլ երկրներ), և հայերի համար ազգային/պետական մակարդակով ***բարեկամներ*** են համարվում այն երկրները, որոնք նեղության պահին ձեռք են մեկնում և օգնություն ցուցաբերում, և այս փաստն էլ թելադրում է համապատասխան բառապաշար՝ ***ավագ ընկեր, հովանավոր, քույր քաղաքներ*** և այլն:

Բարեկամության՝ բրիտանական և ամերիկյան ընկալումները միանգամայն այլ բնույթ ունեն. թե՛ Մեծ Բրիտանիան և թե՛ ԱՄՆ-ը այլ երկրների հետ իրենց *բարեկամական հարաբերությունները* կառուցում են ***փոխադարձ շահերի (mutual benefits/advantages)*** հիման վրա և այդ բարեկամությանն էլ տալիս են համապատասխան անվանումներ, որոնք ամրագրվում են լեզվում՝ ***relationship, intercourse (փոխհարաբերություններ), contacts (շփումներ), union (միություն), pact, alliance (դաշինք), treaty (պայմանագիր, դաշնագիր)*** և այլն:

Մեր աշխատանքում մենք ***բարեկամություն*** հասկացույթը դիտարկել ենք նաև որպես միջանձնային փոխհարաբերությունների կարևորագույն դրսևորում, որի <<իրականացնողներն>> են ***բարեկամները, ընկերները, ազգականները, արյունակիցները, հարազատները և խնամիները:***

Հայերենում ***բարեկամ*** բառը, ինչպես ցույց է տալիս բառի ստուգաբանությունը, այն անձն է, ով <<***բարին է կամենում մյուսին***>> (ըստ Հ. Աճառյանի *Հայերեն արմատական բառարանի*, հայերենում ***բարեկամներ*** են նաև

© National Library of Armenia

ազգակցական կապով միմյանց հետ կապված մարդիկ)[9]: Ճիշտ է, անգլերեն *well-wisher* բառը նույնպես նշանակում է՝ <<մարդ, ով մեկ ուրիշին երջանկություն և հաջողություն է կամենում և պատրաստ է կիսել նրանց հետ այդ երջանկությունն ու հաջողությունը>>, սակայն ***well-wisher*** բառի իմաստային կառուցվածքում բացակայում է ***ազգական, արյունակից*** նշանակությունը: Փոխարենը՝ անգլերենում ունենք ***cousin seven/several times removed, Scotch cousin*** ԴՄ-ները, որոնք նշանակում են ***հեռավոր ազգականներ*** և հիմնականում բացասական հարանշանակության կրողներ են:

Անգլերենում ***companion*** բառում առկա չէ բարի կամքի արտահայտությունը. այն սերում է ֆրանսերեն "compagnon" բառից, որը նշանակում է " ընկեր, զուգընկեր", որն էլ առաջացել է լատիներեն companionem (nom. companio), բառից, որը բառացիորեն թարգմանվում է <<հացի ընկեր>>, ապա՝ հին անգլերենում այն փոխարինվել է gefera "traveling companion," (from faran "go, fare") բառակապակցությամբ, որը նշանակում է <<ճամփորդող ընկեր>>: Թեպետ ***companion*** բառի ստուգաբանությունն ենթադրում է, որ անգլերենում ամրագրված է եղել **<<հացի ընկեր>>** իմակը, այսօր փաստ է, որ բրիտանացիները կամ ամերիկացիները առավել շատ հակված են **companion-ընկերակից** կոչել իրենց հետ <<միասին ճամփորդողներին>> և ոչ թե <<հաց կիսողներին>>:

Բարեկամություն հասկացույթի վերլուծությունը ցույց է տալիս, որ միջանձնային փոխհարաբերությունների ենթատեքստում երեք մշակույթներում էլ ***բարեկամությունն*** առավելապես ընկալվում է որպես ***ընկերություն***: Եթե հայերի աշխարհի պատկերում ***ընկերությունն*** ունի խորապես արժեքային ընկալում (**ընկերը** քո երկրորդ **եսն** է՝ Ասա ով է **ընկերդ**, ասեմ ով ես դու), ապա թե՛ բրիտանական, և թե՛ ամերիկյան աշխարհի պատկերում՝ **ընկերն** այն մարդն է, ում հետ կարելի է հաճելի ժամանակ անցկացնել:

Անգլալեզու մշակույթում ***friend*** բառի նշանակության հիմքում ընկած է սիրո և կապվածության գաղափարը՝ frijaz (գոթ.)՝ սիրելի, թանկագին, ազատ: Այս արմատը հարում է հնդեվրոպական *prij՝ թանկագին, արժանի (հմմտ. ռուսերեն՝ приятель) բառին (ODEE), որի արդյունքում՝ գերմանական լեզուներում ***ընկերը*** ընկալվում է որպես՝ սիրելի, թանկագին մարդ և յուրային:

Հայերենում ***ընկեր*** բառը ստուգաբանորեն նշանակում է *հետն ուտող*՝ *ընդ* *<<հետ>>+<<ուտելիք կամ ուտեղ>>՝ հացակից*, և ունի ճիշտ միևնույն կազմությունը, ինչ գոթ. gahlaiba, լատ. companio, ֆրանս. compain, compagnon՝ ընկեր (<<հացակից>>) բառերը: Լատ. companio, բառը կազմված է գոթ. gahlaiba բառի օրինակով, որը գործածվել է զինվորական ոլորտում, վերաբերել է

[9] Սեղմագրի ծավալից ելնելով՝ չենք ներկայացնում օգտագործված բառարանները. դրանք նշված են ատենախոսության գրականության ցանկում:

զինվորական ընկերոջը և փոխադրվել է հայերեն՝ <<ընկեր>> բառի տեսքով: Այստեղից էլ՝ հայի համար ընկերն այն մարդն է, ում հետ կարելի է սեղան նստել, հաց կիսել և կռիվ գնալ:

Ընկերոջ բրիտանական և ամերիկյան ընկալումները միանգամայն այլ են: Բրիտանացիները և ամերիկացիները կարող են ընկեր համարել թե՛ նրանց, ում ճանաչում են մանկուց, թե՛ նրանց, ում հենց նոր են հանդիպել և սովորաբար ունեն ***ընկերների տարբեր շրջանակներ (circles of friends)***, օրինակ՝ ***church friend (եկեղեցական ընկեր), work friend, co-worker (աշխատանքային ընկեր), officemate (գրասենյակային ընկեր), dancing partner (պարընկեր), classmate (դասընկեր),*** կամ էլ ***tennis partner (թենիսի ընկեր):*** Հայերենում նույնպես հանդիպում են ընկերների տարբեր <<տեսակներ>>՝ ***խաղընկեր, գործընկեր, դասընկեր, պարընկեր,*** սակայն սրանց կողքին առկա են նաև՝ ***հացի ընկեր, դժբախտության ընկեր*** կամ էլ՝ ***հարազատ ընկեր*** արտահայտությունները, որոնք զուտ հայ մշակույթին հատուկ իրակություններ են: Հայերենում առկա են նաև՝ ***սեղանակից, զրուցակից, կողակից*** և այլ բառաբարդումներ, որտեղ ***կից*** արմատը ներառում է նաև՝ *մոտ, մտերիմ, հարազատ* իմակները: Հայերի համար **ընկերությունը** սուրբ երևույթ է, և ***ընկերություն*** հասկացույթը հաճախ զուգորդվում է հայ մշակույթում չափազանց կարևորվող այլ՝ ***տուն, հաց*** հասկացույթների հետ, որի վկայությունն են լեզվում ամրագրված ԴՄ-ները՝ ***տան տղա, միասին հաց կիսել, աղուհացով մարդ*** և այլն:

Ընկեր բառի հասկացական լիցքը հայերի, բրիտանացիների և ամերիկացիների աշխարհի լեզվական պատկերում վեր հանելու համար՝ վերլուծել ենք երկու լեզուների բացատրական բառարանների սահմանումները:

Ընկեր բառի բառարանային սահմանումներից բխող հասկացական բնութագրիչների վերլուծությունը երկու լեզուներում ցույց է տալիս ***ընկերություն*** երևույթի ընկալման նշանակալի նմանությունները հայ և անգլախոս մշակույթներում՝ ***մտերմությամբ՝ սիրով մեկի հետ կապված մարդ, բարեկամ, աշխատակից, գործունեությամբ մեկի հետ կապված մարդ, ընկերակից, միասին ճանապարհ գնացող, համախոհ, կողմնակից, զուգակից, սիրած*** և այլն:

Հիմնական տարբերությունները կարելի է սահմանել հետևյալ կերպ. հայ մշակույթում **ընկերները** միմյանց հետ կապված են հոգևոր մտերմության և վստահության շեշտադրմամբ, իսկ անգլախոս /առավելապես բրիտանական/ մշակույթում առաջին պլան է մղվում **ընկերոջ** և **թշնամու** հակադրությունը, ինչպես նաև՝ **ընկեր** բառի պաշտոնական խոսույթում գործածության կարևորությունը:

Խնամի բառը և խնամիություն երևույթը՝ որպես բարեկամության մեկ այլ դրսևորում, հատուկ է միայն հայ մշակույթին, որտեղ ամուսնացած զույգի ծնողների բարեկամությունը՝ խնամիությունը ենթադրում է փոխադարձ հոգատարություն (***խնամի*** բառն ունի ***խնամ*** արմատը՝ խնամել, հոգալ): ***Խնամի*** բառի համարժեքներն անգլերենում ***(in-laws, mother-in-law, father-in-law, sister-in-***

© National Library of Armenia

law, brother-in-law), ենթադրում են *<<օրենքով միեյանց հետ բարեկամացած անձանց>>*, ուստի բրիտանական և ամերիկյան մշակույթներում երկու կողմերի ծնողների հարաբերությունները չեն հասնում *բարեկամության* և գրեթե բացառում են *միմյանց հոգսերը կիսելու կամ միմյանց խնամելու* փաստը:

Հայ մշակույթում ***բարեկամությունը*** ընկալվում է նաև որպես ***հարազատություն*** (հարազատ- մի հոր զավակ, եղբայր կամ քույր, կոչ. ծնող, մտերիմ, ազգակից, սիրելի, պհլ. Hađazāt ձևից՝ հարազատ, <<եղբայր է <<համածնունդ, ծննդակից, զուգածնունդ): Հայերի աշխարհի պատկերի ժամանակակից ընկալումներում ***հարազատ*** բառը գործածվում է ոչ միայն իր առաջնային՝ *ազգակից/արյունակից* իմաստով, այլ առավելապես՝ *սիրելի մարդ* իմաստով: ***Բարեկամության*** նման ընկալումը բացակայում է բրիտանական և ամերիկյան մշակույթներում. անգլերեն ***kin*** *(ազգակից)* բառը չունի հայերեն ***հարազատ*** բառի ողջ լիցքը:

Երրորդ ենթագլխում (<<Թշնամություն>> հասկացույթի ընկալումները հայ, բրիտանական և ամերիկյան մշակույթներում>>), ուսումնասիրվում են ***թշնամություն*** հասկացույթի հասկացական և արժեքային դրսևորումները՝ հայերի, բրիտանացիների և ամերիկացիների աշխարհի պատկերում:

Ընկեր/բարեկամ բառերը հակադրվում են ***թշնամի*** բառին, որը հստակեցվում է ***հակառակորդ, ախոյան, ընդդիմադիր, ոսոխ*** բառային միավորներով:

Հայերենում ***թշնամի*** բառը սերում է պհլ. Dušman, dušmen, պրս. dušman, ասոր. Dižmin, զնդ. Dušmainyu <<թշնամի, թշնամություն>>, բառերից, որոնք ծագում են duš <<վատ>> և mainyu <<հոգի, միտք>> բառերից՝ չարամիտ, ուստի՝ թշնամի նշանակում է՝ ***ոսոխ, հակառակորդ, չարակամ.***

Անգլերենում **enemy** բառը սերում է լատիներեն in-amicus, այսինքն՝ <<ոչ ընկեր>> բառից, ***foe*** բառը հարում է *զինված հակամարտության* գաղափարին, ***fiend*** բառն ունի *ատելություն* իմաստով արմատը:

Թշնամի բառի հասկացական լիցքը հայերի, բրիտանացիների և ամերիկացիների աշխարհի լեզվական պատկերում վեր հանելու համար՝ վերլուծել ենք երկու լեզուների բացատրական բառարանների սահմանումները, որոնցից կարելի է դուրս բերել ***թշնամի*** հասկացույթի հատկանիշների հետևյալ հիմնական խմբերը՝ 1. մարդ կամ մարդկանց խմբեր, ովքեր ատում են այլ մարդկանց կամ այլ բաներ, 2. մարդ կամ մարդկանց խմբեր, ովքեր մերժում, բացասում են այլ մարդկանց կամ այլ բաներ, 3. մարդ կամ մարդկանց խմբեր, ովքեր հակասում են այլ մարդկանց կամ այլ բաների, 4. մարդ կամ մարդկանց խմբեր, ովքեր զինված պայքար են մղում այլ մարդկանց կամ այլ բաների դեմ:

Թշնամի հասկացույթի հատկանշական և կենտրոնական սահմանումները երկու լեզուներում հիմնականում համընկնում են: Միայն հայերեն բառարանային սահմանումներում առկա են՝ գյուղատնտեսական ոլորտին հատուկ ***վնասատու*** և սպորտային ոլորտում գործածվող՝ ***մրցակից*** բառերը: Հատկանշական է, որ անգլերենում կարելի է առանձնացնել **թշնամու** հանդեպ ***հակակրանքի*** և ***ատելության*** դրսևորման տարբեր ուժգնություններ ներկայացնող իմակներ, (որոնք բացակայում են հայերենում), իսկ հայերենում՝ ***գաղափարական թշնամի*** բառակապակցությունը (որը բացակայում է անգլերենում):

Թեպետ ***թշնամություն*** հասկացույթը երեք լեզվամշակույթներում էլ ունի միևնույն հիմնանշանակային իմաստը՝ <<***մարդ, ով խիստ հակակրանք է տածում մեկի նկատմամբ և հակառակության՝ պայքարի մեջ է գտնվում մեկի հետ***>>, այն տարբեր գնահատողական և արժեքային դրսևորումներ է ստանում՝ կախված տվյալ մշակույթից, ինչպես նաև՝ դարաշրջանից, տիրող հասարակարգից և այլն: Ասվածի վառ օրինակ կարող է ծառայել ***թշնամություն*** հասկացույթի առկայացումը ***ազգի թշնամի*** իմաստային դաշտում:

Մեծ Բրիտանիայում ***ազգի թշնամի*** եզրույթը լայն տարածում չի գտել. այն կարելի է գտնել միայն XVIII- XIX դարերի ծաղրանկարիչների շարժերում: Բրիտանացիների համար ազգի թշնամին ընկալվում է որպես ***<<հասարակական թշնամի>> (public enemy),*** որը նրանց համար թագավորական ընտանիքի անդամներն են, հասարակության բարձր խավը, որոնք, ըստ բրիտանացիների մեծ մասի՝ վտանգում են ազգի բարեկեցությունը:

ԱՄՆ-ում ***ազգի թշնամիներ*** են համարվել <<կազմակերպված հանցագործ խմբավորումների>> (Organised Crime) անդամները՝ ***գանգստերները*** (gangsters), ***կորզիչները (racketeers), ամենակարող հանցագործները (big master criminals), ազդեցիկ առաջնորդները*** և ***կնքահայրերը (powerful leaders of organized crime and godfathers):*** Այսօր ԱՄՆ-ի ***թշնամիները*** հիմնականում ***մրցակցային թշնամիներ*** են՝ տնտեսական (Չինաստան), կրոնական (իսլամական պետություններ) քաղաքական (Իրան, Հյուսիսային Կորեա, Աֆղանստան, Իրաք) ոլորտներում:

Ազգային-պետական մակարդակներում ***ազգի թշնամի*** արտահայտության ընկալումները հայ լեզվամշակույթում միանգամայն տարբեր են. *ազգի թշնամի* են համարվել հենց ազգի ներսում որևէ հանցանք կատարած անձիք: Հայ պատմության մեջ դարեր շարունակ ***պետության թշնամիներ*** են համարվել տարբեր երկրներ՝ Սասանյան Պարսկաստանը, Օսմանյան կայսրությունը, Բոլշևիկյան Ռուսաստանը, այսօր՝ նաև Ադրբեջանը, Հունգարիան: Հայ ժողովրդի համար, որը երկար ժամանակ զուրկ է եղել պետականությունից, ***թշնամի պետություն*** և ***թշնամի ազգ*** հասկացությունները նույնացվել են. օրինակ, *<<թուրք>>*- բառը կարող է հատուկ նշանակություն ունենալ հայ ժողովրդի համար, այն է՝ ***թշնամի*** (*հմմտ. Հո դու թուրք չե՞ս*), ինչը բացատրվում է հայոց պատմությամբ և աշխարհաքաղաքական այլ գործոններով:

© National Library of Armenia

Հայ մշակույթում չափազանց հետաքրքիր ընկալումներ ունի *օտար* բառը: <<Մերը և օտարը>> երկփեղկությունը հայ լեզվամշակույթում բնավ մտացածին իրողություն չէ, և դրա ապացույցն են հայերի առօրյա բառամթերքում <<օտարներին>> բնորոշող որոշ բառեր և արտահայտություններ՝ *արտերկրացի, օտարերկրացի, այլազգի, օտարերկյան ներդրումներ* և այլն, որոնք հաճախ բացասական հարանշանակության կրողներ են: Առանձնակի ուշադրության են արժանի *օտար ափերում, օտար ամայի ճամփեքի վրա* արտահայտությունները, որտեղ *օտար* և *ամայի* բառույթները զուգակցվում են հայերի պատմականորեն նախանշված ճակատագրի վայրիվերումների, օտար ափերում դեգերումների և *օտար, անիմանալի, անընդունելի* երևույթների հետ:

Ուսումնասիրության *երկրորդ գլխում (<<Բարեկամություն>> և <<Թշնամություն>> հասկացույթների բառային առկայացումը հայերի, բրիտանացիների և ամերիկացիների աշխարհի լեզվական պատկերում>>)* *բարեկամություն* և *թշնամություն* հասկացույթների առկայացման բառային միջոցների և բառիմաստային խմբերի ուսումնասիրությունն իրականացրել ենք ըստ հասկացույթի հանդեպ՝ ճանաչողական լեզվաբանության հայեցակերպի, դիտարկելով այն որպես բազմաշերտ բջիջ, որն ունի միջուկ և մերձավոր ու հեռավոր եզրային շերտեր:

Առաջին ենթագլխում (<<Բարեկամություն>> հասկացույթի բառային առկայացումը հայ, բրիտանական և ամերիկյան լեզվամշակույթներում>>) *բարեկամություն* հասկացույթի բառայնացման միջոցները անգլերենում և հայերենում խմբավորել ենք ըստ իմաստային դաշտերի, որի շնորհիվ բացահայտել ենք *բարեկամություն* հասկացույթի միջուկային և եզրային շերտերը՝ երեք լեզվամշակույթներում:

Ըստ անգլերեն և հայերեն հոմանիշների բառարանների՝ *բարեկամություն* հասկացույթն ունի բառայնացման հետևյալ միջոցները. անգլերենում՝ *companion, friend, associate, pal, buddy, comrade, consort, mate, fellow, follower, supporter, patron, intimate, crony, chum, defender, adheret, benefactor, advocate, well-wisher, ally* (22 բառային միավոր), հայերենում՝ *բարեկամ, ազգական, մերձավոր, մտերիմ, ընկեր, համախոհ, հարազատ, ընկերակից, ազգակից, յուրային, արյունակից, սրտակից, գործակից, խնամի, օգնական, պաշտպան, կողմնակից, մտերմուհի, սիրուհի* (19 բառային միավոր):

Ելնելով *բարեկամություն* հասկացույթի բառայնացման միջոցների սահմանումներից՝ դրանք ներկայացրել ենք անգլերենում 5, իսկ հայերենում՝ 8 բառիմաստային խմբերով, որոնցից յուրաքանչյուրն ունի իր *գերմիավորը*՝ նույնացուցիչը, որից սերում են շարքի մյուս անդամները՝ *ընկերություն/մտերմություն (friend, ընկեր/մտերիմ), համախոհություն (adherent, համախոհ), ընդհանուր գործունեություն (associate, ընկերակից), զուգակազմություն (consort, զուգակից), հովանավորություն (supporter,*

հովանավոր), արյունակցություն (արյունակից, ազգական), խնամիություն (խնամի), հարազատություն (հարազատ): Առանձին բառիմաստային խումբ են կազմում բարեկամական *դիմելաձև* մատնանշող բառույթները *(buddy, ընկեր):*

Բարեկամություն հասկացույթն առկայացնող բառույթների բառարանային սահմանումների վերլուծությունից պարզ է դառնում, որ բրիտանական և ամերիկյան աշխարհի լեզվական պատկերում *բարեկամություն* հասկացույթի *միջուկը* կազմում են *companion* և *friend* բառույթները, *մերձավոր եզրային շերտը*՝ *buddy, fellow, associate, partner, pal, chum, mate, crony, patron, comrade, advocate, supporter, adheret, benefactor, ally, հեռավոր եզրային շերտը*՝ *intimate, defender, well-wisher, consort, follower,* բառույթները, իսկ հայերի աշխարհի լեզվական պատկերում *բարեկամություն* հասկացույթի *միջուկը* կազմում են *բարեկամ* և *ընկեր* բառույթները, *մերձավոր եզրային շերտը*՝ *ազգակից, ազգական, արյունակից, մերձավոր, մտերիմ, խնամի, ընկերակից, հարազատ, սրտակից, յուրային, գործակից, մտերմուհի* և *հեռավոր եզրային շերտը*՝ *համախոհ, օգնական, կողմնակից, սիրուհի* և *պաշտպան* բառույթները:

Երկրորդ ենթագլխում (<<Թշնամություն>> հասկացույթի բառային առկայացումը հայ, բրիտանական և ամերիկյան լեզվամշակույթներում>>) անգլերենում և հայերենում *թշնամություն* հասկացույթի առկայացման բառային միջոցները խմբավորել ենք ըստ իմաստային դաշտերի, որի շնորհիվ բացահայտել ենք *թշնամություն* հասկացույթի միջուկային և եզրային շերտերը՝ երեք լեզվամշակույթներում:

Ըստ անգլերեն և հայերեն հոմանիշների բառարանների՝ *թշնամություն* հասկացույթն անգլերենում առկայանում է 45 բառային միավորներով, իսկ հայերենում՝ 12 բառային միավորով:

Թշնամություն հասկացույթի բառայնացման միջոցները ներկայացրել ենք անգլերենում 7, իսկ հայերենում՝ 4 բառիմաստային խմբերում՝ իրենց գերմիավորներով՝ *հարձակվողական թշնամություն (attacker, թշնամի), բանավիճող թշնամություն (disputant, հակառակորդ), զրպարտող թշնամություն (villifier,* թեև հայերենում կան անգլերեն *villifier* գոյականի համարժեքները՝ *զրպարտիչ, չարախոս, բամբասող, վարկաբեկող, պղծող,* դրանք բառարաններում ամրագրված չեն որպես *թշնամի* բառի հոմանիշներ), *դավաճանող թշնամություն (betrayer,* հայերենում *դավաճան* բառը բառարաններում ամրագրված չէ որպես *թշնամի* բառի հոմանիշ*), սպանող թշնամություն (murderer,* թեև հայերենում կան *մարդասպան, ահաբեկիչ, ոճրագործ, հանցագործ* բառերը, դրանք չեն համալրում *թշնամի* բառի հոմանիշային շարքը), *գաղտնի գործունեություն ծավալող թշնամություն (agent,* թեև հայերենում գոյություն ունեն *agent, guerrilla, spy* գոյականների համարժեքները՝ *գործակալ, պարտիզան, լրտես,* դրանք չեն համալրում *թշնամի* բառի հոմանիշային շարքը), *խռովություն բարձրացնող թշնամություն (rebel, ընդդիմադիր), մրցակցող թշնամություն (rival, մրցակից):*

© National Library of Armenia

Հասկացույթն արտահայտող բառույթների բառարանային սահմանումների վերլուծությունից պարզ է դառնում, որ բրիտանական և ամերիկյան աշխարհի լեզվական պատկերում *թշնամություն* հասկացույթի *միջուկը* կազմում են ***enemy*** ***և foe*** բառույթները, *մերձավոր եզրային շերտը*՝ ***archenemy, assailant, attacker, asperser, betrayer, calumniator, defamer, defiler, fifth column, invader, murderer, assassin, hijacker, guerrilla, opponent, opposition, rebel, saboteur, terrorist,*** իսկ *հեռավոր եզրային շերտը*՝ ***bandit, antagonist, detractor, adversary, disputant, agent, contender, competitor, falsifier, criminal, informer, inquisitor, other side, backbiter, prosecutor, revolutionary, seditionist, slanderer, rival, spy, traducer, traitor, vilifier, villain*** բառույթները, իսկ հայերի աշխարհի լեզվական պատկերում ***թշնամություն*** հասկացույթի *միջուկը* կազմում է ***թշնամի*** բառույթը, *մերձավոր եզրային շերտը*՝ ***ոսոխ, ախոյան, հակառակորդ, մրցակից, ներհակ, վրեժխնդիր, սատան,*** իսկ *հեռավոր եզրային շերտը*՝ ***ընդդիմադիր, քինախնդիր չեմպիոն*** *և* ***օտար*** բառույթները:

Երրորդ ենթագլխում (<<Բարեկամություն>> և <<թշնամություն>> ***հասկացույթների բառայնացման միջոցների վիճակագրական վերլուծություն>>)*** իրականացվել է ***բարեկամություն*** և ***թշնամություն*** հասկացույթների բառայնացման միջոցների կիրառման հաճախականության ուսումնասիրություն՝ ըստ անգլերենի՝ British National Corpus, Corpus of Contemporary American English և արևելահայերենի՝ Արևակ ազգային կորպուսների, որոնց տրամադրած վիճակագրական տվյալների շնորհիվ կարելի է առավել հստակ պատկերացում կազմել լեզվակիրների աշխարհընկալման մեջ՝ տվյալ հասկացույթների արժևորման և գործածության արդիականության մասին:

Ըստ երեք կորպուսների տվյալների՝ երեք լեզվամշակույթներում էլ որպես ***բարեկամություն*** հասկացույթի բառայնացման միջոցների կիրառման հաճախականության **գերմիավորներ** դիտվում են՝ ***friend*** (բրիտ. 16202, ամեր. 72717) և ընկեր (22118) բառերը, իսկ ***թշնամություն*** հասկացույթի բառայնացման միջոցների կիրառման հաճախականության **գերմիավորներ** են **<<գաղափարական թշնամություն>>** բառիմաստային խմբի իրար համարժեք ներկայացուցիչները՝ ***opposition*** (բրիտ. 8671, ամերկ. 22482) և ***ընդդիմադիր*** (9145) բառերը:

Աշխատանքի երրորդ գլխում, որը վերնագրված է *<<Բարեկամություն>> և <<թշնամություն>>* ***հասկացույթների դարձվածային արտահայտումը հայ, բրիտանական և ամերիկյան լեզվամշակույթներում>>,*** փորձ է արվում համակողմանի վերլուծության ենթարկել ***բարեկամություն*** և ***թշնամություն*** և դրանց առընթեր բաղադրիչներով (երբեմն նաև՝ այդ բաղադրիչների բացակայությամբ) կազմված ԴՄ-ները, ասացվածքները և առածները և զուգադրել դրանք ձևավորվող զուգորդային դաշտերը:

Առաջին ենթագլխում (<<Բարեկամություն>> հասկացույթի դարձվածային արտահայտումը հայ, բրիտանական և ամերիկյան լեզվամշակույթներում>>) ***բարեկամություն*** հասկացույթի հաղորդակցական-տեղեկատվական դաշտում առանձնացրել ենք. անգլերենում՝ 5, հայերենում՝ 7 զուգորդային դաշտեր:

Անգլերենում ***բարեկամություն*** հասկացույթի ***բարեկամություն*** → ***ընկերություն*** զուգորդային դաշտն ունի հետևյալ ենթադաշտերը՝

- ընկերություն → մտերմություն. ***to be hand in glove with sb., a close friend, a bosom friend, a sworn friend, a best friend, old school ties*** ԴՄ-ներում մտերմության ողջ լիցքը հիմնականում արտահայտված է ***close, bosom, sworn, best, old*** բառերով:
- ընկերություն → հուսալիություն/անհուսալիություն՝ ***fair-friend, trust not a new friend, nor an old enemy,*** որտեղ հուսալիությունը/անհուսալիությունը առավելապես ներկայացված է ***fair, new, old*** ածականներով, ***trust*** բայով և այլն:
- ընկերություն → փորձություն. ***a friend in need is a friend indeed, prosperity makes friends and adversity tries them, before you choose a friend eat a bushel of salt with him*** ԴՄ-ներում փորձության իմակը ներկայանում **prosperity, need, salt** և այլ բառային միավորներով:
- Մեկ այլ հետաքրքիր զուգորդային ենթադաշտ են կազմում **ընկերությանը/ընկերոջը** վերագրվող **դրական և բացասական որակներ** արտահայտող ԴՄ-ները՝ ***false friends are worse than open enemies*** (կեղծավորություն), ***friend's frown is better than a foe's smile, An honest answer is the sign of true friendship*** (անկեղծություն), ***he that hath a full purse never wanted a friend*** (շահամոլություն), ***fast friends, a faithful friend is the medicine of life*** (հավատարմություն) և այլն:

Հայերենում ***բարեկամություն*** հասկացույթի ***բարեկամություն*** → ***ընկերություն*** զուգորդային դաշտում առանձնանում են հետևյալ ենթադաշտերը:

- Ընկերություն → մտերմություն. ***իրար/ միմյանց ջան ասել, ջան լսել, կտուց կտցի (լինել), քիթ-քթի (լինել), եղունգ ու միս լինել*** և այլ ԴՄ-ներում մտերմություն իմակն հիմնականում արտահայտված է ***պոչ, կտուց, քիթ, եղունգ*** կազմաբանական բառային միավորներով և ***ջան*** ձայնարկությամբ:
- Ըներություն → ախպերություն. ***լավ ախպեր, ախպերս, որ դու ես*** և այլ ԴՄ-ներ խոսակցական ժանրից են և կիրառվում են իբրև դիմելաձև:
- Հայերենում նույնպես առանձին զուգորդային ենթադաշտ են կազմում **ընկերությանը/ընկերոջը** վերագրվող **դրական և բացասական որակներ** արտահայտող ԴՄ-ները՝ ***արյունը հալալ անել*** (ներողամտություն), ***վերջին շապիկն էլ տալ/չխնայել*** (մեծահոգություն), ***հոգի տալ, տասը մատը մոմ շինել դիմացը վառել*** (նվիրվածություն), ***ինձ տուր քեզ տամ, իրար երեսի նայել*** (շահադիտություն), ***պոչը շարժել*** (կեղծավորություն):

Բարեկամություն→ արյունակցություն զուգորդային դաշտում անգլերենում կարելի է առանձնացնել ***brother as the tree, so the fruit/the tree is***

© National Library of Armenia

known by its fruit, first cousin once removed , to come the uncle over smb. ԴՄ-ները, որոնցում *արյունակցությունը* հիմնականում արտահայտվում է *brother, cousin, friend, uncle* բառերի միջոցով, իսկ հայերենում՝ *եղունգը մսից չես բաժանի, երակների մեջ/ երակներում միևնույն արյունը հոսել/ վազել/եռալ, աղ ու հացի եղբայր ԴՄ-ները,* որոնցում արյունակցական կապի ցուցիչ են՝ *մի տան մեջ լինելու, միասին աղ ու հաց կիսելու, նույն արյունից սերելու* հատկանիշները:

Բարեկամություն → հովանավորություն, բարեկամություն→ համախոհություն, *բարեկամություն → զուգընկերություն* զուգորդային դաշտերը՝ դրանք ձևավորող ԴՄ-ներով առկա են թե՛ անգլերենում, թե՛ հայերենում:

Անգլերենում բացակայում է *բարեկամություն → հարազատություն* զուգորդային դաշտը, որը հայերենում վառ կերպով արտահայտված է *մի շապիկի մեջ քնել / մեծանալ, տան դուռը բաց լինել (մեկի առաջ), միասին հաց կտրել, հարկի օջախ, տան մարդ, տան տղա* ԴՄ-ներում:

Բարեկամություն → խնամիություն զուգորդային դաշտը նույնպես առկա է միայն հայերենում: *Ծանոթ-խնամիական* հարաբերությունները չափազանց կարևորվում են հայ մշակույթում և հաճախ օգտագործվում են՝ տարատեսակ կենցաղային հարցեր լուծելու համար՝ *մարդ ունենալ, մարդ մեջ գցել* և այլն:

Կարելի է փաստել, որ հայ լեզվամշակույթում *բարեկամություն* հասկացույթն առավել ընդգրկուն է, ունի իմաստային և զուգորդային տարատեսակ շերտեր, ինչի վառ ապացույցն է հայերերենում *բարեկամություն* հասկացույթը ներկայացնող ԴՄ-ների (376 ԴՄ) և դրանցով արտահայտված զուգորդային դաշտերի (7) գերակշռությունը՝ անգլերենում *բարեկամություն* հասկացույթը ներկայացնող ԴՄ-ների (290 ԴՄ) և դրանցով արտահայտված զուգորդային դաշտերի (5) նկատմամբ:

Երկրորդ ենթագլխում (<<Թշնամություն>> հասկացույթի դարձվածային առկայացումը հայ, բրիտանական և ամերիկյան լեզվամշակույթներում>>) թշնամություն հասկացույթի հաղորդակցական-տեղեկատվական դաշտում առանձնացրել ենք անգլերենում՝5 հայերենում 9 զուգորդային դաշտեր:

Թշնամություն → հարձակում զուգորդային դաշտն անգլերենում ներկայանում է *sword, teeth, war* գոյականներով և *to cross, to draw, to sow, to carry բայերով* կազմված ԴՄ-ներում՝*to cross swords, to draw one's / the sword against, to sow dragon's teeth, to carry the war into the enemy's camp/country,* իսկ հայերենում՝ *ճակատ, ատամ* կազմաբանական բառային միավորներով, *սուր, քար* գոյականներով և *զարկել, սրել, ցցել, խաչաձևել, գցել, ճոճել* բայերով կազմված ԴՄ-ներում՝ *ճակատ ճակատի դիպչել /զարկել, ատամները սրել/ծնգծնգացնել/ ցցել, սուր խաչաձևել, բանջարանոցը /բոստանը /բակը քար գցել (մեկի), սուր խաղացնել /ճոճել*.

Երկու լեզուներում էլ բազմաթիվ ԴՄ-ներ, առածներ և ասացվածքներ կան, որոնք համալրում են *թշնամություն → գրպարտում, թշնամություն → դավաճանություն, թշնամություն → զաղտնի գործունեություն, թշնամություն → վրեժխնդրություն, թշնամություն → մրցակցություն* զուգորդային դաշտերը:

Անգլերենի ԴՄ-ներում բացակայում է *թշնամություն → կեղծում* զուգորդային դաշտը, իսկ հայերենում նրա ողջ լիցքը ներկայացված է *մուկ, կատու, գայլ* կենդանանուններով, *մորթի, աստառ, հայելի, ածելի* գոյականներով և *մարմանդ* ածականով կազմված ԴՄ-ներում՝*մուկ ու կատու խաղալ, ոչխարի զգեստով / մորթի հագած գայլ, աստառը շուռ տված, դրսից հայելի, ներսից ածելի, մի՛ վախենա եռման ջրից/գետից, վախեցի՛ր մարմանդ գետից* և այլն:

Թշնամություն → սպանություն զուգորդային դաշտը չի ներկայացված անգլերեն ԴՄ-ներում, իսկ հայերենում այն հիմնականում առկայանում է *արյուն, ծուխ* բաղադրիչներով կազմված ԴՄ-ներում՝ *արյուն թափել, արյան գիծ, արյունը խմել (մեկի), արյան բաղնիք /ծով, ծուխը քամուն տալ,* որոնցում *արյուն, ծուխ* բառերը զուգորդվում են կյանքի հետ, ուստի *առնել, թափել, խմել, քամուն տալ* բայերի և *ծով, բաղնիք* բառերի հետ համադրվելով՝ արտահայտում են կյանքի կորստի, ոչնչացման կամ սպանության իմաստ:

Թշնամություն → բանավեճ զուգորդային դաշտը նույնպես հատուկ է միայն հայերենին և առկայանում է հիմնականում *լեզու* կազմված ԴՄ-ներում՝ *լեզվակռիվ տալ* և այլն

Թշնամություն→ խռովություն զուգորդային դաշտում միայն հայերենում ենք առանձնացրել ԴՄ-ներ, որոնք կազմված են *ճակատ, գլուխ* գոյականներով՝ *ճակատը դեմ անել, գլուխը կախ և այլն:*

Անձնական թշնամություն իմաստային խմբում ընդգրկված ԴՄ-ները հիմնականում ներկայացնում են մարդկային բացասական որակներ՝ *false friends are worse than bitter/open enemies* (դաժանություն, չարություն), **wish sb ill** (չարակամություն), *սուրբ սխտոր* (խաբեբայություն), *ցեխն ընկածին քացի տալ* (նենգություն), *ուրիշ աչքով նայել* (չարակամություն), *փորը պատռվել* (նախանձություն) և այլն:

Կարելի է փաստել, որ հայ լեզվամշակույթում *թշնամություն* հասկացույթն առավել ընդգրկուն է և վառ արտահայտված, քան՝ բրիտանական և ամերիկյան լեզվամշակույթներում, ինչի ապացույցն է հայերենում *թշնամություն* հասկացույթը ներկայացնող ԴՄ-ների (315 ԴՄ) և դրանցով արտահայտված զուգորդային դաշտերի (9) գերակշիռ քանակը՝ անգլերենի նույն հասկացույթը ներկայացնող ԴՄ-ների (210 ԴՄ) և դրանցով արտահայտված զուգորդային դաշտերի (5) նկատմամբ:

© National Library of Armenia

Եզրակացության մեջ ամփոփվել են ուսումնասիրության հիմնական արդյունքները:

1. *Հասկացույթը* լեզվաբանական երկու գիտակարգերի՝ լեզվամշակութաբանության և ճանաչողական լեզվաբանության հիմնական միավորներից է, քանի որ միատեղում է <<լեզու–մշակույթ>> և <<լեզու-ճանաչողություն>> առնչությունները և աղերսվում աշխարհի լեզվական պատկերի կաղապարմանը՝ լեզվակրի գիտակցության մեջ:
2. *Բարեկամություն* և *թշնամություն* հասկացույթները միջանձնային, միջխմբային, ազգերի և պետությունների միջև փոխհարաբերություններ ներկայացնող բարդ մտային կառույցներ են, հավաքական գիտակցության դիսկրետ միավորներ, որոնք արտացոլում են հասկացական և արժեքային մի շարք առանձնահատկություններ և կարող են հիմք ծառայել հայ, բրիտանական և ամերիկյան ազգային լեզվամտածողության բնորոշ գծերի բացահայտման համար:
3. Թե՛ հայերի, թե՛ բրիտանացիների աշխարհի պատկերում *բարեկամություն* և *թշնամություն* հասկացույթների կաղապարման մշակութային առանձնահատկություններից է այն փաստը, որ մարդկանց տարանջատումը *բարեկամների* և *թշնամիների* պայմանավորված է եղել պատերազմական իրավիճակներում նրանց գործողությունների և վարքային դրսևորումների հետ: Որպես *բարեկամ և ընկեր* են ընկալվել զինակիցները, իսկ որպես *թշնամիներ*՝ սեփական անձի նյութական և հոգևոր ունեցվածքի նկատմամբ ոտնձգություն կատարող օտարները: *Թշնամության և բարեկամության* ամերիկյան ընկալումներն առավելապես հարում են ԱՄՆ-ի և այլ երկրների քաղաքական, տնտեսական, առևտրային, գիտական և տեխնոլոգիական ոլորտներում համագործակցության և մրցակցության գաղափարին:
4. *Բարեկամություն* և *թշնամություն* հասկացույթները թե՛ հայ, թե՛ բրիտանական, և թե՛ ամերիկյան լեզվամշակույթներում կարևորագույն հասկացույթների թվին են պատկանում՝ իրենց հասկացական և արժեքային ընկալումներով (ինչի վկայությունն է այդ հասկացույթներն առկայացնող բառային և դարձվածային միավորների ստվար քանակն անգլերենում և հայերենում): Սակայն դրանք ունեն ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ՝ կապված պատմական զարգացումների, աշխարհաքաղաքական, սոցիալական, մշակութային և այլ գործոնների հետ:
5. Ազգային-պետական մակարդակներում հայոց բարեկամները *հովանավոր երկրներն* են, իսկ Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը բարեկամանում են այլ երկրների հետ՝ *փոխադարձ շահերի* հաշվառմամբ:
6. Պետական մակարդակում ԱՄՆ-ի **թշնամիները** հիմնականում **մրցակցային թշնամիներ են՝ տնտեսական, կրոնական, քաղաքական** և այլ ոլորտներում, բրիտանացիները **ազգի թշնամի** են համարում **երկրի բարեկեցությունը խաթարող թագավորական ընտանիքի անդամներին և վերնախավին**, իսկ հայերի համար **ազգի թշնամիները** նույնանում են **հայրենիքի դավաճանների, հոգևոր երկպառակություն սերմանողների, իսկ այսօր նաև՝ օտարալեզու դպրոցների, կաշառակերության և որոշ պաշտոնատար այրերի** հետ:
7. Երեք մշակույթներում էլ միջանձնային փոխհարաբերություններում *բարեկամությունն* ընկալվում է որպես *ընկերություն, ազգակցություն, արյունակցություն, մտերմություն և ծանոթություն,* սակայն դրանք ունեն հասկացական և արժեքային զգալի տարբերություններ: Եթե հայերի համար ընկերությունը ենթադրում է ավելի մեծ նվիրում և ավելի ամուր կապ, ապա՝ Բրիտանիայում և Նահանգներում նվիրումը և հոգատարությունը ընկերության կամ բարեկամության անհրաժեշտ տարրեր չեն:
8. Միջանձնային փոխհարաբերությունների համատեքստում *թշնամություն* հասկացույթի բառային առկայացումներում անգլերենում կարելի է առանձնացնել **թշնամու** հանդեպ տարբեր ուժգնության *հակակրանքի* և *ատելության* դրսևորման իմակը, իսկ հայերենում՝ գերակշռում է *գաղափարական թշնամի* իմաստային շերտը:
9. Տարբեր է *բարեկամություն* հասկացույթի լեզվականացման միջոցների տեղաբաշխումը երկու լեզուներում: Թեպետ ըստ հոմանիշների բառարանների՝ անգլերենում *բարեկամ* բառը ներկայանում է 22, իսկ հայերենում՝ 19 բառ-հոմանիշներով, հայերենում գերակշռում են *բարեկամություն* հասկացույթի բառայնացման միջոցների իմաստային խմբերը. դրանք հայերենում 8-ն են, իսկ անգլերենում՝ 5-ը: Ըստ երեք կորպուսների տվյալների՝ երեք լեզվամշակույթներում էլ *բարեկամություն* հասկացույթի բառայնացման միջոցների կիրառման հաճախականության **գերմիավորներ** են՝ *friend* (բրիտ. 16202, ամեր. 72717) և **ընկեր** (22118) բառերը:
10. Տարբեր են նաև *թշնամություն* հասկացույթի բառայնացման միջոցների քանակական դրսևորումները երկու լեզուներում: Եթե անգլերենում *թշնամի* բառն ունի 45 հոմանիշ, ապա հայերենում դրանք ընդամենը 12-ն են: Անգլերենում *թշնամություն* հասկացույթի բառայնացման միջոցները ներկայացված են 7, իսկ հայերենում՝ 4 բառիմաստային խմբերում: Ըստ երեք կորպուսների տվյալների՝ երեք լեզվամշակույթներում էլ *թշնամություն* հասկացույթի բառայնացման միջոցների կիրառման հաճախականության **գերմիավորներ** են <<**գաղափարական թշնամություն**>> բառիմաստային խմբի իրար համարժեք ներկայացուցիչները՝ *opposition* (բրիտ. 8671, ամերկ. 22482) և *ընդդիմադիր* (9145) բառերը:
11. *Բարեկամություն* և *թշնամություն* հասկացույթներն առկայացնող հայերեն ԴՄ-ների (բարեկամություն՝ 376 ԴՄ, թշնամություն՝ 315 ԴՄ) մոտ 68%-ում բացակայում է հասկացույթն առկայացնող բառային միավորը, իսկ անգլերեն

© National Library of Armenia

ԴՄ-ների (բարեկամություն՝ 290 ԴՄ, թշնամություն՝ 210 ԴՄ) մոտ 61 %-ում առկա է տվյալ հասկացույթն առկայացնող բառային միավորը:

12. *Բարեկամություն* և *թշնամություն* հասկացույթների ճանաչողական և լեզվամշակութային լիցքը հայերենում արտահայտված է կազմաբանական բառային միավորներով՝ *ոտք, ձեռք, աչք, լեզու, եղունգ*, կերակրանուններով՝ *հաց, ջուր* և աղ, և *տուն, ընտանիք* բառերով, իսկ անգլերենում ՝ հիմնականում *կենդանուն-բաղադրիչներով* կազմված ԴՄ-ներում:
13. Եթե երկու լեզուների ԴՄ-ներում առկա են *բարեկամություն* հասկացույթի *հովանավորություն, մտերմություն, զուգընկերություն, համախոհություն, արյունակցություն,* զուգորդումները, ապա միայն հայերեն ԴՄ-ներում են արտահայտված *հարազատություն* և *խնամիություն* զուգորդումները:
14. Երկու լեզուների ԴՄ-ներում ներկայանում են *թշնամություն* հասկացույթի *հարձակում, զրպարտում, դավաճանություն, գաղտնի գործունեություն, վրեժխնդրություն* զուգորդումները, իսկ հայերեն ԴՄ-ներում նաև՝ *սպանություն, բանավեճ, կեղծում* և *խռովություն* զուգորդումները:

Այսպիսով, վերլուծելով և զուգադրելով *բարեկամություն* և *թշնամություն* հասկացույթների բառայնացման միջոցները, իմաստային խմբերը և զուգորդային դաշտերը անգլերենում և հայերենում՝ հանդիպում ենք լիակատար կամ մասնակի համապատասխանության, ինչպես նաև՝ համապատասխանության բացակայության դեպքերի, ինչը բացատրվում է ոչ միայն հասկացույթներն առկայացնող բառային միավորների բազմիմաստությամբ, այլ նաև՝ տվյալ լեզվամշակույթների առանձնահատկություններով: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ թե՛ անգլերենում և թե՛ հայերենում գերակշռում են *բարեկամություն* հասկացույթն առկայացնող բառերն ու ԴՄ-ները, ինչն ապացույցն է այն փաստի, որ երեք լեզվամշակույթներում էլ թե՛ ազգային-պետական, և թե՛ միջանձնային փոխհարաբերություններում առավել արժևորվում են *բարեկամությունն* ու *բարյացկամությունը* և ոչ՝ հակամարտություններն ու *թշնամությունը*:

Աշխատանքի հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. *Թշնամի* հասկացույթի վերլուծությունը միջմշակութային և միջլեզվական տեսանկյունից //<<Բանբեր>> հանդես 1(19), ԵՊԼՀ <<Լինգվա>> հրատ., Երևան, 2012, էջ19-23:
2. *Թշնամի* հասկացույթը <<ազգի թշնամի>> իմաստային դաշտում /զուգադրական վերլուծություն// <<Բանբեր>> հանդես 1(21), ԵՊԼՀ <<Լինգվա>> հրատ., Երևան, 2012, էջ 19-25:
3. *Բարեկամ* հասկացույթի վերլուծությունը անգլերենում և հայերենում միջմշակութային տեսանկյունից//<<Աստղիկ>> հանդես (22-23), ԵՊՀ <<Սահակ Պարթև>> հրատ., Երևան, 2012-2013, էջ 217-223:

АЛАВЕРДЯН АНАИТ СЛАВИКОВНА

ЛИНГВО-КУЛЬТУРОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ КОНЦЕПТОВ "ДРУЖБА" И "ВРАЖДА" В СОВРЕМЕННОМ АНГЛИЙСКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10. 02. 03 - <<Сравнительное и типологическое языкознание>>

Защита состоится 26 декабря 2012. в 13.00 часов на заседании специализированногосовета 059 ВАК при ЕрГЛУ имени В. Я. Брюсова. (по адресу: 0002, г. Ереван, ул. О. Туманян, 42)

РЕЗЮМЕ

Реферируемая диссертация посвящена сравнительно - сопоставительному анализу лингвокультурологических концептов **дружба** и **вражда** в армянской, британской и американской лингвокультурах, выделению их общих и различительных особенностей.

Во введении обосновывается актуальность темы, отмечается новизна исследования, представляются основные цели и задачи работы, кратко излагаются принципы и методы исследования.

Актуальность исследования.

В последние десятилетия значительные изменения, возникшие в научной жизни, привели к необходимости рассмотрения ряда важнейших понятий. Миссию исследования феноменов в цепочке *язык-культура-когнитивизм* взяли на себя когнитивная лингвистика и этнолингвистика.

Целью работы является проведение сравнительно - сопоставительного анализа смысловых, структурных и ценностных особенностей концептов **дружба** и **вражда**, выявление их общих и различительных особенностей содержательного приращения в армянском и английском мировосприятии.

Предметом данного исследования являются концепты дружба и вражда, их исследование в армянской, британской и американской лингвокультурах.

Научная новизна исследования.

В диссертации впервые четко и акцентированно выделяются, характеризируются и анализируются концепты **дружба** и **вражда** и средства их актуализации на основе широкого языкового материала, который включает номинативные средства концептов **дружба** и **вражда** на словарном и фразеологическом уровне, их синонимические ряды и их словарные манифестации в армянском и английском языках.

© National Library of Armenia

Задачи исследования:

1. провести всестороннее исследование основной единицы когнитивной лингвистики и лингвокультурологии - термина *концепт* и основных методов анализа концепта;

2. исследовать когнитивные, лингвокультурологические концепты **дружба** и **вражда**, выявляя их понятийные и ценностные составляющие в трех культурах;

3. сопоставить средства актуализации концептов **дружба** и **вражда** на словарном и фразеологическом уровнях и систематизировать полученные результаты, выявляя роль языковых и внеязыковых факторов в трех культурах.

Языковым материалом исследования послужили английские и армянские фразеологические единицы, пословицы и поговорки, которые актуализируют концепты **дружба** и **вражда**. Употребления концепта были подкреплены примерамы из художественной литературы, проанализированы смысловые и ассоциативные поля двух концептов.

Методолигической основой для нашего исследования послужили идеи и взгляды специалистов и лингвистов в области когнитивной лингвистики. При анализе концептов **дружба** и **вражда** были использованы метод сплошной выборки, метод компонентого анализа, концептуальный анализ, сопоставительный анализ и методы параллельного комментирования. Также было проведено исследование лингвистических корпусов и статистический анализ.

Языковым материалом исследований послужили английские и армянские фразеологические единицы, пословицы и поговорки, актуализирующие концепты **дружба** и **вражда**.

Теоретическая значимость исследования.

Результаты данного исследования могут способствовать дальнейшему исследованию единиц концептуальной системы языка, а также выработке сопоставительно- концептуальной методики.

Практическая ценность исследования.

Результаты данного исследования могут быть использованы при составлении спецкурсов по лингвокультурологии, когнитивной лингвистике и в сопоставительной семантике английского и армянского языков, а также при создании практических пособий и словарей.

Структура работы. Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы.

ANAHIT ALAVERDYAN

LINGUO-CULTURAL PECULIARITIES OF THE CONCEPTS "FRIENDSHIP" AND "ANIMOSITY" IN MODERN ENGLISH AND ARMENIAN

Thesis for the degree of candidate of philological sciences, specialty 10.02.03- "Comparative and Typological Linguistics"

The defense of the thesis will be held at 13.00 on December 26, 2012, at the session of the Special Board 059 HAC (Higher Attestation Commission) to award degrees under the Yerevan State Linguistic University, address: 0002, st. H. Toumanyan,42).

RESUME

In the last decades the significant changes taken place in scientific thinking resulted in the necessity of reconsidering a number of essential notions. The notion of meaning has always been high on the agenda of linguistic studies. The meanings of words in different languages can coincide and transfer the same notion but the way of thinking peculiar to some language community can be different from that of another community.

The topicality of the research: Cultural concept being the main unit of the social science is a multi-graded semantic formation having its expressive, valuable and notional characteristics. The concepts **Friendship** and **Animosity** are of particular interest as they are among the universal cultural concepts which have the same references and often different significance and perceptions in different languages, being fit for the comparative analysis.

The aim of the research: The research aims at surveying the concepts **Friendship** and **Animosity** in the Armenian, English and American cultures and revealing language similarities and differences through comparative analysis.

The concepts *Friendship* and *Animosity* are analyzed on the basis of rich language material which contains the nomination means of the mentioned concepts on the word and phraseological level, their synonymic chains and word manifestations in English and Armenain. The applications have been elucidated through the examples extracted from fiction.

The objectives of the research:

- to investigate the main unit of Cognitive Linguistics and Cultural linguistics - the term **concept**, and the main methods of analysis,

© National Library of Armenia

- to investigate the cognitive and linguo-cultural concepts Friendship and Animosity, revealing their conceptual and valuable constituents in Armenian, British and American cultures,
- to compare the actualization of the concepts **Friendship** and **Animosity** on the basis of the word and phraseological levels and to systematize the gained results.

The scientific novelty of the research:

- for the first time the concepts **Friendship** and **Animosity** are distinctly singled out, characterized and analyzed in three - Armenian, British and American linguo-cultures on the basis of rich language material in English and Armenian,
- the comparison of the concepts **Friendship** and **Animosity** is new and interesting as different languages are bearers of different cognitive perspectives which receive different word realizations in the language reflecting a certain culture.
- the data provided by the corpus analysis have enabled us to reveal the differences in the perception and utilization frequency of these universal concepts, depending on the cultural and language activity of a certain language-bearer,
- the representation of the associative fields of the concepts **Friendship** and **Animosity** in two languages is new, too,
- through this research we can contribute to the establishing of the opinion that the concepts **Friendship** and **Animosity** are complex mental structures, representing the relationship between men and nations, discrete units of collective consciousness which reflect a number of conceptual and valuable peculiarities and can serve as a basis for revealing some traits peculiar to the Armenian, British and American national language thinking.

The theoretical significance of the research: The results of the given research can contribute to further investigations of the conceptual system of a language. The research is of great value not only in the field of Cognitology, but also in those of Ethnolinguistics and Cognitive Linguistics.

The practical value of the research: The research may contribute to the development of cross-cultural and cross- linguistic relations, but also to the realization of exact translations from English into Armenian and from Armenian into English. The results of the research can have a number of practical applications: they can be applied in the courses of Ethnolinguistics and Cognitive Linguistics, in the courses of English and Armenian Semasiology, as well as for compiling manuals and dictionaries.

The structure of the research: The structure of the research flows from the issues touched upon in the research. It consists of an introduction, three chapters, conclusion, and bibliography.

© National Library of Armenia

ՀՀ Ազգային գրադարան
NL0568240
© National Library of Armenia

© National Library of Armenia